



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՏՆԱԳԻՏԱԾՈՒՄ • ՓՈՐՁ • ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՏՀ ռեկտոր Դիանա Գալոյանի խոսքը 2021թ. հունվարի 22-ին գիտական խորհրդի նիստում

Հարգելի գործընկերներ, սիրելի ուսանողներ, թույլ տվեք ձեր ուշադրությանը ներկայացնել 2020թ. ՀՊՏՀ գործունեության հաշվետվությունը և 2021թ. բյուջեի նախահաշիվը: Այս տարի առաջին անգամ հաշվետվությունը ներկայացրել ենք ըստ ՀՊՏՀ 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությամբ նախանշված գործողությունների ծրագրի, իսկ բյուջեն պլանավորել ենք ծրագրային բյուջետավորման ձևաչափով:

Ռազմավարական զարգացման առաջին Կրթական ծրագրերի որակի բարելավում նպատակին համապատասխան իրականացվել է կրթական ծրագրերի վերանայում, կառուցվածքային և բովանդակային բարեփոխումներ: Արդյունքում 2020-2021 ուսումնական տարում առաջին անգամ ՀՊՏՀ բակալավրիական բոլոր 11 մասնագիտությունները կայացել են: Համալրվել է նաև այդ մասնագիտություններում դասավանդող դասախոսների կազմը:

2020թ. ՀՊՏՀ-ն գործատուների հետ համատեղ մշակել և լիցենզավորում է ստացել 11 նոր մոդուլային կառուցվածքով մագիստրոսական ծրագրերի համար, որոնցից 5-ը միջոլորտային: Նոր մագիստրոսական ծրագրերից 2020-2021 ուսումնական տարում կայացել են 8-ը:

Նոր մագիստրոսական ծրագրերին զուգահեռ վերանայվել են նաև նախկին քսան մագիստրոսական կրթական ծրագրերը, առանձին մոդուլներում ավելացվել են կիրառական գիտելիքներ հաղորդող դասավանդման մեթոդները, ավելացվել է կամրնտրական առարկաների տեսակարար կշիռը, ներդրվել է կամրնտրական առարկաների ընտրության նոր համակարգը, որն իրականացվում է Moodle հարթակի միջոցով: Հարկ է նշել, որ 20 նախկին մագիստրոսական ծրագրերից 2020-2021 ուսումնական տարում կայացել են 12-ը:

Որակյալ կրթության ապահովմանը նպաստող գործոններից է նաև ուսանողների փորձառության կազմակերպումը: Ընդհանուր առմամբ, ընթացիկ տարում փորձառության է մասնակցել 1676 ուսանող և 18 ասպիրանտ: Ընդ որում, բակալավրիատի ուսանողների 36%-ը, իսկ մագիստրատուրայի ուսանողների 74%-ը փորձառության փուլում արդեն ապահովված են եղել աշխատանքով:

Հաշվետու ժամանահատվածում ներդրվել է նաև ուսանողների փորձառության ավարտից հետո հարցումների անցկացման նոր համակարգ, որով ուսանողներին

հնարավորություն է տրվել ներկայացնելու փորձառության արդյունքում ձեռք բերված հմտություններն ու կարողությունները, բարձրաձայնելու հիմնական խնդիրները:

ՀՊՏՀ-ում ուշադրության կենտրոնում են եղել նաև դասախոսական անձնակազմի վերապատրաստման խնդիրները: Մասնավորապես, շարունակական կրթության և վերապատրաստումների բաժինը 2020թ. ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի համար կազմակերպել է «Դասավանդման մեթոդաբանություն», «Վերջնարդյունքահեն կրթական ծրագրեր», «Նախագծերի կառավարման հիմունքներ», «Ֆինանսական նորարարություններ» և այլ վերապատրաստման դասընթացներ: Ընդհանուր առմամբ, 2020թ. վերապատրաստվել և տարբեր դասընթացների է մասնակցել ՀՊՏՀ դասախոսական կազմի 25%-ը:

Համավարակը որոշակի փոփոխությունների անհրաժեշտություն առաջացրեց ՀՊՏՀ-ում տարբեր փորձագետների մասնակցությամբ վարպետաց-դասերի, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների հետ հանդիպումների կազմակերպման ձևաչափում: Ստեղծվեց ASUE-Talks հարթակը, որի շրջանակներում, որպես հրավիրյալ փորձագետներ, հանդես են եկել միջազգային տարբեր կառույցների ղեկավարներ, արտասահմանյան բուհերի դասախոսներ, փորձագիտական հանրային ներկայացուցիչներ: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են թվով յոթ մասնագիտական քննարկումներ, որոնց ընդհանուր դիտումների քանակը գերազանցել է 44,000-ը:

Կարևորելով համալսարան-դպրոց կապը՝ Տնտեսագիտական համալսարանի արտաքին կապերի ղեկավարամենտը, ուսանողական խորհրդի հետ համատեղ, նախաձեռնել է մասնագիտական կողմնորոշման նպատակով դպրոցականների այց-հանդիպումներ, բաց դռների օրեր, հյուրընկալել մեկ տասնյակից ավելի ավագ դպրոցների և քոլեջների ավելի քան 400 աշակերտների: Մարզային դպրոցների դիմորդներին ՀՊՏՀ-ի հետ ծանոթացնելու նպատակով համալսարանը X-Tech ընկերության հետ համատեղ նկարահանել է բուհի մասին պատմող 5G ձևաչափի տեսահոլովակ, ձեռք է բերել VR ակնոցներ: Սրան զուգահեռ, ՀՊՏՀ պաշտոնական կայքում արդիականացվել, համալրվել և համակարգվել է «Դիմորդ» բաժինը, ՀՊՏՀ ֆեյսբուքյան էջում բացվել է նաև «ՀՊՏՀ դիմորդ 2020» խումբը, որն ունի շուրջ 3000 անդամ: Մասնագիտական կողմնորոշմանն ու դիմորդների հետ աշխատանքի աննախադեպ ծավալները էապես ազդել են ընդունելության գործընթացի վրա, որի արդյունքում 2020-2021 ուսումնական տարում բոլոր կրթաձևերով, բացի հեռակա մագիստրատուրայից, ընդունելությունն ավելացել է, մասնավորապես առկա բակալավրիատում նախորդ տարվա համեմատ՝ 86%-ով, իսկ առկա մագիստրատուրայում՝ 34%-ով: Արդյունքում 2020թ., 2019թ. համեմատ, ուսանողների թիվն ավելացել է 14.6 %-ով:

Կորոնավիրուսային համավարակի տարածման հետևանքով, ուսումնառության առցանց կազմակերպման անհրաժեշտությամբ պայմանավորված, կրթության

կազմակերպումն իրականացվել է Zoom և Moodle հարթակների միջոցով: Ձևավորվել է մեթոդական բազա բոլոր ՄԿԾ-ների համար: Zoom ընկերության հետ պայմանագրի կնքման արդյունքում ձեռք է բերվել 100 լիցենզիոն օգտահաշիվ, որոնք ինտեգրված են Moodle հարթակում: Moodle հարթակի միջոցով իրականացվում է 3280 դասընթաց: Հեռավար կրթության ներդրումից հետո հարթակի այցելությունների թիվը կազմել է շուրջ 1,6 միլիոն:

Ամբողջությամբ գործարկվել է նաև ՀՊՏՀ էլեկտրոնային դեկանատի համակարգը (ums.asue.am), որում վերբեռնվել են բոլոր ուսանողների տվյալները, ձևավորվել են էլեկտրոնային մատյանները, տեղեկագրերը և այլն:

Ըստ ռազմավարական ծրագրի երկրորդ՝ ՀՊՏՀ գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացում նպատակի, ՀՊՏՀ-ում մշակվել են գործունեության կարգավորման մի շարք կարգեր:

Հաշվապահական, աուդիտի, մարքեթինգային և այլ ծառայությունների մատուցման նպատակով Տնտեսագիտական համալսարանում 2019թ. հիմնվել է «Փոփոխությունների կառավարման լաբորատորիան»՝ ASUE ChangeLab-ը, «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» և «Տնտեսության անորոշության մոդելավորում» լաբորատորիաները:

ASUE ChangeLab-ի կողմից, հաշվետու ժամանակահատվածում, մրցույթով ընտրված ՀՊՏՀ 20 ուսանողների համար կազմակերպվել է 16 վարպետաց դաս, ձեռք բերված պրակտիկ հմտությունների շնորհիվ դասընթացներին մասնակցած ուսանողների 60%-ը գործընկեր կազմակերպություններում անցել են մասնագիտական աշխատանքի: ASUE ChangeLab-ը, համագործակցելով Սոցիալական բիզնես դպրոցի հետ, հաշվետու ժամանակաշրջանում 30-ից ավելի ստարտափների համար իրականացրել է նաև մենթորային ծրագիր: ԼԱԲ-ի ուսանողներից 8-ը ներգրավվել են «ԿԱՅԾ» սոցիալական նորարարական ինկուբատոր ծրագրում, որն ուղղված է կրթության ոլորտում նորարարական ծրագրերի խթանմանը:

Միաժամանակ, հաշվետու տարում մշակվել է համալսարանի ստորաբաժանումների հաշվետվողականության համակարգ՝ ըստ ռազմավարական նպատակներում սահմանված հիմնական կատարողական ցուցանիշների, որը հնարավորություն է տալիս ավելի համակարգված, չափելի և տեսանելի դարձնել որոշակի ստորաբաժանումների կատարած աշխատանքը, իսկ հետագայում նաև ներդնել աշխատակիցների խրախուսման անհատական կառուցակարգեր:

Կիրառական հետազոտություններ-կրթություն և կիրառական հետազոտություններ-տնտեսություն ոլորտներում համագործակցության ապահովում ռազմավարական նպատակի իրացման համար ՀՊՏՀ-ում հաշվետու տարում ձևավորվել է գիտահետազոտական գործունեության ինստիտուցիոնալ և իրավական հենքը, որը կնպաստի գիտության, որպես համալսարանի գործունեության կարևորագույն

բաղադրիչներից մեկի հետագա զարգացմանը, գիտական գործունեության ակադեմիական հեղինակության բարձրացմանը:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի և ամբիոնների ընթացիկ հետազոտական աշխատանքներում սովորողների մասնակցությունը խրախուսելու համար ՀՊՏՀ-ում պարտադիր պայման է դարձել հետազոտական խմբերում սովորողների 30% մասնակցության ապահովումը:

2020թ. ընթացքում, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից դրամաշնորհային հիմունքով իրականացվել են 13 հետազոտական ծրագրեր, որից 8-ը պետական կառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում: Նշված 13 ծրագրերում ներգրավվել են շուրջ 30 ուսանողներ և ասպիրանտներ:

Ընդհանուր առմամբ, ՀՊՏՀ անձնակազմի կողմից հաշվետու ժամանակահատվածում հրապարկումների մասին նշենք հետևյալը՝ թեև ազդեցության գործակցով ամսագրերում տպագրվող հոդվածների քանակը շարունակում է մնալ անբավարար, այնուամենայնիվ, հեղինակների խրախուսման համակարգի ներդրումը հանգեցրել է դրանց թվի աճին՝ 133%-ով:

Միջազգայնացման ընդլայնում ռազմավարական նպատակի իրացման շրջանակներում 2020 թվականին ՀՊՏՀ-ն 23 բուհերի և միջազգային կրթական հաստատությունների հետ կնքել և վերակնքել է համագործակցության հուշագրեր և պայմանագրեր:

Ինչ վերաբերում է ուսանողների և դասախոսների շարժունությանը, ապա այն հիմնականում կատարվել է ԵՄ «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում, որին մասնակցել է 7 դասախոս և 17 ուսանող: Միջազգային կապերի բաժինը 2020թ. դիմել է 90 եվրոպական համալսարանների՝ «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում համագործակցության համար և 27 համալսարաններից ստացել համաձայնություն: Խորացվում է նաև համագործակցությունը ԱՊՀ տարածաշրջանի բուհերի հետ:

ՀՊՏՀ-ն 2020 թվականի հոկտեմբերից մասնակցում է Ամերիկյան Խորհուրդներ գրասենյակի և ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպված Հայաստանի և Վրաստանի բուհերի միջազգայնացման խթանմանն ուղղված ծրագրին, որի շրջանակներում ՀՊՏՀ-ն մրցույթի արդյունքում ընդգրկվել է այն 3 բուհերի շարքում, որոնք կստանան խորհրդատվական աջակցություն Ամերիկյան Խորհուրդներ գրասենյակի կողմից և COIL հարթակի միջոցով կհամագործակցեն առաջատար ամերիկյան բուհերի հետ՝ մշակելով և իրականացնելով մոդուլների համատեղ դասավանդում:

Կարևորելով բուհի միջազգային վարկանիշավորման հարցը՝ հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել նաև այդ ուղղությամբ: Մասնավորապես, 2020 թ. առաջին անգամ ՀՊՏՀ-ն ներառվել է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (EECA) բուհերի QS World University Rankings 2021 վարկանիշում: Հայաստանից այս վարկանիշավորման մեջ ներառված են 5 բուհեր: ՀՊՏՀ-ն Հայաստանի

ամերիկյան համալսարանի և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հետ միասին կիսում է 251-300-րդ հորիզոնականը:

2020 թ. հունվարին հրապարակվել է նաև Փենսիլվանիայի համալսարանի Աշխարհի ուղեղային կենտրոնների գլոբալ վարկանիշավորման զեկույց 2019 (Go To Think Tank Index Report 2019), համաձայն որի՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը Կենտրոնական Ասիայի առաջատար ուղեղային կենտրոնների շարքում նախորդ տարվա համեմատ բարելավել է իր դիրքերը երկու հորիզոնականով՝ զբաղեցնելով 59-րդ տեղը, իսկ աշխարհի 100 լավագույն համալսարանական ուղեղային կենտրոնների շարքում զբաղեցրել է 94-րդ հորիզոնականը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՊՏՀ-ն անդամակցել է Եվրասիական համալսարանների ասոցիացիային, BSEMAN համալսարանական ասոցիացիային, ինչպես նաև իրականացվում են աշխատանքներ Համալսարանների միջազգային ասոցիացիային անդամակցելու համար, որին միանալու ՀՊՏՀ-ի դիմումը հաստատվել է:

Աշխատանքներ են տարվում Լանչժոուի համալսարանի նախաձեռնությամբ և Չինաստանի կառավարության օժանդակությամբ ստեղծված՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության համալսարանների ընկերակցությանը ՀՊՏՀ անդամակցման ուղղությամբ, ինչպես նաև Մետաքսի ճանապարհի ուղեղային կենտրոնների ընկերակցությանը ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի անդամագրման ուղղությամբ:

Միջազգային ծրագրերին մասնակցության ընդլայնման նպատակով ՀՊՏՀ-ում ֆոնդահայթայթման ինստիտուտի հիմնումը դրական ազդեցություն է ունեցել նոր ծրագրերի ներգրավման առումով: 2020թ. ՀՊՏՀ-ն առաջին անգամ դարձել է EUCON Ժան Մոնե ներթվոք դրամաշնորհի շահառու, ինչպես նաև «Վիշեգրադյան քառյակի փորձի յուրացումը գիտելիքի և տեխնոլոգիաների փոխադրման բնագավառում» դրամաշնորհային ծրագրի համակարգող: Ընթացիկ տարում ՀՊՏՀ-ում շարունակվում է նաև նախկինում շահած 6 միջազգային ծրագրերի իրագործումը:

Ակադեմիական էթիկայի և սոցիալական պատասխանատվության սկզբունքների ներդրում ռազմավարական նպատակի իրացման համար հաշվետու տարում մշակվել և գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացվել «ՀՊՏՀ ՊՈԱԿ ներքին կարգապահական կանոնները», ՀՊՏՀ Կոլեկտիվ պայմանագիրը, «ՀՊՏՀ ՊՈԱԿ էթիկայի և բարեվարքության» կանոնակարգը:

«Միներվա» ծրագրի իրականացման արդյունքում հետազոտական ոլորտում ակնկալվող կարևորագույն ձեռքբերումներից է ակադեմիական էթիկայի խախտումների դեմ պայքարի ծրագրի ներդրումը, սպասարկող տեխնիկական ենթակառուցվածքների, ինչպես նաև հետազոտությունների ներդրված բազայի ստեղծումը, որն իր մեջ ներառում է հնարավորինս ընդգրկուն ժամանակահատվածում բուհի գիտական հետազոտության արդյունքների վերաբերյալ լայնածավալ տվյալների բազայի հավաքագրում:

2020թ. ՀՊՏՀ-ում մշակվել է նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագրի միջոցառումների» ցանկը, որի շրջանակներում նախատեսվում է գործընկեր կազմակերպությունների մասնագետների ներգրավմամբ իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց դասավանդող դասախոսների վերապատրաստում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար համապատասխան ենթակառուցվածքների համալրում:

2020 թ. ՀՊՏՀ-ում հատուկ ուշադրության են արժանացել սոցիալական պատասխանատվության ծրագրերը: Մասնավորապես, հաշվետու տարում ուսման վարձի գեղչի իրավունք է ստացել 1731 ուսանող: Մինևույն ժամանակ նոր կորոնավիրուսային համավարակի և Արցախյան պատերազմի բացասական հետևանքները մեղմելու համար բուհը համապատասխանաբար 190 և 55 ուսանողների տրամադրել է հավելյալ ֆինանսական օգնություն:

Սոցիալական պատասխանատվության ծրագրեր բուհում իրականացվում են նաև աշխատակիցների համար: Մասնավորապես, 2020թ. ՀՊՏՀ 400 աշխատակիցների համար ձեռք է բերվել առողջապահության ապահովագրության փաթեթ, տրամադրվել է 4 նորաստեղծ ընտանիքի աջակցման նպաստ և 11 երեխայի ծննդյան խրախուսման նպաստ:

Հաշվետու տարում մեծ ուշադրության են արժանացել նաև հասարակայնության հետ կապերը: Թեև կայքում հրապարակված հայտարարությունների և նորությունների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է՝ պայմանավորված բուհի աշխատանքների հեռավար կազմակերպմամբ, այնուամենայնիվ, կայքի այցելուների թիվը ավելացել է 9,2 %-ով:

Այնուամենայնիվ, հաշվետու ժամանակաշրջանում համավարակով, կրթության և աշխատանքային գործունեության առցանց կազմակերպմամբ և հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված առաջ են եկել մի շարք խնդիրներ՝ կապված ուսանողների հաճախումների, ակտիվության գնահատման, քննաշրջանի, փորձառության կազմակերպման, ՀՊՏՀ գիտամանկավարժական կազմի, ամբիոնի վարիչների և դեկանների ընտրության և տեղակալման բաց մրցույթների կազմակերպման, ՀՊՏՀ նոր կառուցվածքի հաստատման, միջազգայնացման գործընթացների հետ: Համավարակը զգալի խնդիրներ է առաջացրել նաև համալսարանի գիտական գործունեության կազմակերպման գործում, մասնավորապես չի կայացել նախապես հայտարարված ՀՊՏՀ 45-ամյակին նվիրված գիտաժողովը, շարունակում են անբավարար մակարդակի վրա մնալ պրոֆեսորոդասախոսական համակազմի հրապարակումները, հատկապես հղման գործակից ունեցող միջազգային ամսագրերում:

Ինչ վերաբերում է 2020թ. բյուջեի կատարման ընթացքին, ապա հաշվետու տարում եկամուտները նախատեսվածի նկատմամբ հավաքագրվել են 91 %-ով, արտակարգ իրավիճակով պայմանավորված կան չմուտքագրված գումարներ 284 մլն ՀՀ դրամի

չափով: Փաստացի ծախսերը կատարվել են նախատեսվածի 76 %-ով, եղել են խնայողություններ կոմունալ վճարների հետ կապված, սակայն ավելացել են համավարակի կանխարգելման միջոցառումների հետ կապված ծախսերը: 2021թ. հունվարի 1-ի դրությամբ կուտակված դրամական միջոցների մնացորդը կազմում է 1,4 մլրդ դրամ:

2021 թ. ընթացքում պլանավորված եկամտային հոդվածներով համալսարանի դրամական մուտքերը կկազմեն 3,6 մլրդ դրամ, ինչը 11%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Նախահաշվի եկամտային հոդվածները կազմվել են՝ ելնելով նախորդ տարվա նույն հոդվածների կատարողական ցուցանիշներից, ինչպես նաև գնահատվել են ուսանողների շարժը և նոր ուսումնական տարում կանխատեսվող ընդունելության ցուցանիշները: Միջազգային ծրագրերի պարագայում հաշվի են առնվել գործող և հաստատման փուլում գտնվող ծրագրերի նախահաշիվներով նախատեսված ֆինանսավորման ժամանակացույցները:

2021 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը պակասուրդային է, ծախսերը պլանավորված են 3,7 մլրդ դրամի չափով, ինչը նախորդ տարվա պլանավորումից ավելի է 5%-ով, իսկ փաստացի ծախսերից՝ 38 %-ով: 2021թ. ավելացել են ընթացիկ նորոգման և կապիտալ ծախսերը, հատկապես 15 մլն դրամ նախատեսվել է Դիլիջանի մարզաառողջարանային համալիրի վերանորոգման համար, 25 մլն դրամ նախատեսվել է նոր սերվերների ձեռքբերման համար և այլն:

Այսքանով թույլ տվեք եզրափակել ՀՊՏՀ 2020թ. գործունեության հիմնական արդյունքների և 2021թ. բյուջեի նախահաշվի ներկայացումը: Շնորհակալություն ուշադրության համար:

Հարգանքով՝
ՀՊՏՀ ռեկտոր
ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ

22. 01. 2021թ.